ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2017թվականի N20-Ա

ՎԱՐԴԳԵՍ ՊՈՂՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Վարդգես Պողոսի Վարդանյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության 22-րդ զանգվածի թիվ 63 հասցեի հողամասում 1983 և 1987 թվականներին ինքնակամ կառուցված S=386,83 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1.Վարդգես Պողոսի Վարդանյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգետարածքի 22-րդ զանգվածի թիվ 63 հասցեի հողամասում 1983 և 1987 թվականներին ինքնակամ կառուցված S=386,83 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=71.88 ք.մ.մակերեսով այգետան նկուղը, S=37.12, S=40.95, S=17.25 ք.մ. մակերեսներով բաց պատշգամբները, S=78.96 ք.մ.մակերեսով 1-ին հարկը, S=2.79 ք.մ.մակերեսով աստիճանավանդակը, S=83.66ք.մ մակերեսով ձեղնահարկը, S=30.45 ք.մ.մակերեսով լողավազանը և S=23.77 ք.մ.մակերեսով ծածկարանը ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, , ապա նրա օրինականացման համար վճար չգանձել:

3. Վարդգես Պողոսի Վարդանյանին պատկանող 0,05հա մակերեսով, 07-051-0101-0193 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Կոտայք,, թաղամաս, 1-ին փողոց, թիվ 63:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

28 ապրիլի 2017թ
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2017թվականի N21-Ա

ՎԱՐԴԳԵՍ ՊՈՂՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդգես Պողոսի Վարդանյանի դիմումն և ղեկավարվելով ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ու նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վարդգես Պողոսի Վարդանյանին հատկացված 005հա հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1.Ճանաչել Վարդգես Պողոսի Վարդանյանի սեփականության իրավունքն ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների 07-051-0101-0193 կադաստրային ծածկագրով 0,092023հա մակերեսով բնակելի տան հողամասի նկատմամբ, որը փաստացի նրա կողմից օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

28 ապրիլի 2017թ
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2017թվականի N22-Ա

ՌՈԲԵՐՏ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Ռոբերտ Գագիկի Հովհաննիսյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական N 09112016-07-0021/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգեզանգվածի թիվ 16 հասցեի հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցված S=100,6 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Ռոբերտ Գագիկի Հովհաննիսյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգեզանգվածի թիվ 16 հասցեի հողամասում (գործառնական նշանակությունը – բնակելի կառուցապատման, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի) 2013 թվականին ինքնակամ կառուցված S=100,6 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=93.3 ք.մ.մակերեսով այգետնակը , S=5.70 ք.մ.մակերեսով շինությունները և S=1.60 ք.մ.մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, ապա նրանց օրինականացման համար համայնքի բյուջե վճարել համապատասխանաբար 102 630 /հարյուր երկու հազար վեց հարյուր երեսուն / ու 4 818 / չորս հազար ութ հարյուր տասնութ /, ընդամենը՝ 107 448 /հարյուր յոթ հազար չորս հարյուր քառասունութ/ դրամ:

3. Ճանաչել քաղաքացի Ռոբերտ Գագիկի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգեզանգվածի թիվ 16 հասցեում գտնվող 500քմ մակերեսով հողամասի մինչև 20% ավել օգտագործվող 12,4քմ հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

4. Ռոբերտ Գագիկի Հովհաննիսյանին պատկանող 0,05հա մակերեսով, 07-051-0120-0010 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Միկրոբ,, թաղամաս, 3-րդ փողոց, տուն 6:

5.Սույ նորոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

03 մայիսի 2017թ,
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մայիսի 2017թվականի N 23-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով , որոշում եմ.

1.Նուռնուս համայնքի վարչական տարածքում գտնվող, Բախշի Խորենի Երիմյանին պատկանող թիվ 92ա հասցեի, բնակավայրերի հողատեսքի, բնակելի կառուցապատման 0.0590հա մակերեսով, / սեփականության վկայական 2812591 /, 07-051-158-035 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր իրավաբանական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նուռնուս համայնքի այգետարածք, ,,Շինարար,, թաղամաս, 3-րդ փողոց, տուն 92/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

05 մայիսի 2017թ.
Գ.Նուռնուս